ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ստրասբուրգ (Ֆրանսիայի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Մերի Գասպարյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ֆրանսիայի Հանրապետություն, 2025 թվականի մարտի 31-ից ապրիլի 5-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Եվրոպայի խորհուրդ

5. **Գործուղման նպատակը.**
   Որպես ԵԽ Երեխաների իրավունքների ղեկավար կոմիտեի (CDENF) անդամ՝ ապահովել մասնակցություն ապրիլի 1-2-ին կայացած Երեխաների իրավունքների ղեկավար կոմիտեի (CDENF) 11-րդ հանդիպմանը, իսկ ապրիլի 3-4-ին՝ Երեխայի իրավունքների 2022-2027 թթ. ռազմավարության միջնաժամկետ վերանայման համաժողովին:

6. **Քննարկված թեմաները.**

Լիագումար նիստում CDENF-ը.

- հաստատել է իր 2025 թվականի աշխատանքային պլանը
- նշանակել է Մարիա Ժոաո Ֆերնանդեսին (Պորտուգալիա)՝ որպես «Մարդու իրավունքների և թմրամիջոցների քաղաքականության նախագծման հանձնաժողովի» (DH-PDA) փորձագետ անդամ, իսկ Մարինո դի Նարդոյին (Իտալիա)՝ CDENF դիտորդի կարգավիճակով ներկայացուցիչ CJ-OR կոմիտեում;
- ծանոթացել է Եվրոպայի խորհրդի այլ մարմինների և ոլորտների փոխկապակցված գործունեության մասին ներկայացված տեղեկատվությանը;
- ի գիտություն է ընդունել երեխայի պաշտպանության ինտեգրված համակարգերի մարտահրավերների և լավագույն պրակտիկայի վերաբերյալ Հիմնարար իրավունքների Եվրոպական Միության գործակալության (FRA) ներկայացուցիչ Աստրիդ Պոդսիադլովսկիի ներկայացրած տեղեկատվությունը;
- անցկացրել է տեսակետների և տեղեկատվության փոխանակում ազգային մակարդակում 2023-2024 թվականներին և 2025 թվականի առաջին եռամսյակում Երեխայի իրավունքների ռազմավարության իրականացման վերաբերյալ;

- ծանոթացել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Նաջատ Մալլա Մ'ջիդի՝ բռնությունից երեխաների պատպանության վերաբերյալ տեղեկատվությանը;
- ծանոթացել է Բռնության կանխարգելման փորձագետների կոմիտեի (ENF-VAE) աշխատանքների ընթացքին;
- ի գիտություն է ընդունել Երեխայակենտրոն արդարադատության հասանելիության հարցերով փորձագիտական կոմիտեի (ENF-JUS) առաջին հանդիպման նախապատրաստման վերաբերյալ տեղեկությունը;
- ծանոթացել է արհեստական ինտելեկտի վրա երեխայի իրավունքների ազդեցության գնահատման գործիքի (CRIA) տարրերին;
- ի գիտություն է ընդունել CDENF-ի հաջորդ հանդիպման՝ 12-րդ լիագումար նիստի անցկացման վայրն ու ամսաթիվը՝ Ստրասբուրգ, 2025 թվականի նոյեմբերի 18-20-ը (հաստատման ենթակա):

Երեխայի իրավունքների 2022-2027 թթ. ռազմավարության միջնաժամկետ վերանայման համաժողովի հիմնական թեմաներն էին.

- Բռնությունից ազատություն բոլոր երեխաների համար
- Հավասար հնարավորություններ և սոցիալական ներառում բոլոր երեխաների համար
- Տեխնոլոգիաների հասանելիություն և անվտանգ օգտագործում բոլոր երեխաների համար
- Երեխայակենտրոն արդարադատություն բոլոր երեխաների համար
- Ձայն տալ յուրաքանչյուր երեխայի
- Երեխաների իրավունքները ճգնաժամային և արտակարգ իրավիճակներում

Համաժողովի ընթացքում մասնակցել եմ զուգահեռ ընթացող հետևյալ նստաշրջաններին.

- Երեխաների իրավունքները թվային տեխնոլոգիաների և արհեստական բանականության դարաշրջանում
- Բռնությունից երեխաների պաշտպանություն տարիքին համապատասխան համապարփակ սեռական կրթության միջոցով
- Իրենց առողջությանը վերաբերող որոշումներում երեխաների մասնակցության խթանում

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Եվրոպայի Խորհրդում Լյուքսեմբուրգի նախագահության համատեքստում ապրիլի 2-ին կայացել է ընդունելություն Եվրոպայի Խորհրդում Լյուքսեմբուրգի մշտական ներկայացուցիչ, դեսպան Պատրիկ Էնգելբերգի առանձնատանը, որին հրավիրված էին Երեխաների իրավունքների ղեկավար կոմիտեի (CDENF) 11-րդ հանդիպման և Երեխայի իրավունքների 2022-2027 թթ. ռազմավարության միջնաժամկետ վերանայման համաժողովի բոլոր մասնակիցները:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
Որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**
Առաջարկել եմ դիտարկել ռազմավարությունը հայերեն թարգմանելու հարցում ԵԽ աջակցության հնարավորությունը: Ազգային լեզվով փաստաթղթի առկայությունը կնպաստի դրա արդյունավետ կիրարկմանը և հաշվետվողականության ապահովման անխոչընդոտ իրականացմանը:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Մերի Գասպարյան
11.04.2025